



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

## Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Ն Հ Ե Տ \*

Է

ԿՈՄԻՏԱՆԱ ՃԻԳԻ ՄԵԾ ՏԱՐԻՆ

I.—«Ե՞րբ եկար, ե՞րբ կերթաս»

Բալկանյան պատերազմը պահ մը ընդհատեր էր հանրային կյանքը Պոլսու մեջ:

Աֆրիկյան Տրիպոլաց համար մղված կոփը թուրքերուն և խոալացիներուն միջև, որ հաղիվ քանի մը ամիս էր տեսեր, կարծես թե չէր խանգարած բնականոն կյանքը մայրաքաղաքին մեջ: Հետո ան մղվեր էր թուրքին սահմաններեն դուրս:

Բալկանյան պատերազմն այդպես չէր: Ան կոպաթեր թուրքին սահմաններուն վրա ու անոր եվրոպական հողերն էր, որ թատերաբեմ կունենար՝ ոռութեաւն որոտը հասցնելով մինչև Պոլսու գուռներուն ու կազմալուծելով կյանքը ամբողջ երկրին մեջ:

Այնպէս որ, երբ 1912 փետրվար 8-ին, Սկ լեռ կարծակեր առաջին գնդակը, պահ մը կկասեր նաև գործունեության հայ կյանքեն ներս:

Կոմիտաս չէր կրնար հաշվի շառնել այս կացությունը:

Արդարև, զույգ համերգները, զորս 1912 ապրիլին Կոմիտաս կու տար Փըթի-Շանի մեջ՝ ապրիլ 14-ին, հիմնելի երաժշտանոցի օգտին, և շարաթ մը հետո ազգային հիմնադանոցի ի նպաստ, երկար դադար մը կրահային նաև իր գործունեության մեջ, դադար,

որ կտեսեր նաև Բալկանյան պատերազմեն հետո, Թուրքիո ներթին կյանքը իր բնականոն վիճակը ստացած չըլլալով գեռ:

Այդ ակամա դադարը առիթ դարձավ իրեն էջմիածին այցելել, ուրիշ հեռացած էր երեք տարին ի վեր: Յուրա վերաբերումը, որ մղած էր գինք էջմիածնեն բաժնվիլ, գտավ հոն այցի գալուն առթիվ ալ:

«1913 թվի ամառը ես Սաղկաձորումն էի, — կգրե Մանուկ Աբեղյան Կոմիտասի մասին իր հուշերուն մեջ, — ևսեցի, որ Կոմիտասը Պոլսից վերադարձել է էջմիածին, ամենայն հավանականությամբ այն մտքով, որ նա այնտեղ է, բայց երբ ներկայացել էր կաթողիկոսին, վերջինս հարցրել է նրան, թե նա երր պիտի վերադառնա Պոլիս: Կոմիտասն այդ հարցի վրա սաստիկ զայրացել է և քի հետո ճանապարհ է ընկել դեպի Պոլիս: Լսեցի և շատ ցավեցի, որ նա իսկույն ետ է գնացել՝ առանց իր ընկերների հետ տեսնվելու: Նրա բնավորությունը այդպես էր՝ իսկույն վճիռ գնել և գործադրել վճիռը: Իր հանգիստ, մեղմ ու փափուկ բնավորությամբ, մեկ-մեկ՝ էլ սաստիկ բարկանալ գիտեր այն աստիճան, որ ինքն իրեն բոյորովին կորցնում էր: Այդպիսի գեպքերում նա սովորաբար լուս էր մի երկու վայրկյան և ապա, կարծես թե ո-

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Ա-ից, Ե-Զ-է-ից, Ը-Թ-Ժ-ից, Դ-Ե-Գ-ից և 1966 թվականի № Ա-Բ-Գ-ից, Դ-Ե-Զ-ից և Ը-Թ-Ժ-ից:

շինչ չէր պատահել, սկսում էր նորից սովորական եղանակով դրուցել:

Նամակը, զոր 1913 օգոստոս 7-ին էջմիացիանեն կրթի Զուպանյանին, կերպե ինքնին այս կարծիքը, որ Կոմիտաս Մայր Աթոռ էր Անկեր ալևս մնալու համար հոն, և իրեն հանդեպ ցուց տրված ցուրտ վերաբերումնեն աղդամի է, որ փոխացած է էջմիածինեն Հետանալ: Այսուամենայնիվ, նույն ալդ նամակնեն ալ կպարզվի, որ արդարին սառն եղած է իր մասին ցուց տրված վարմունքը: Այդ նամակին մեջ կրուե.

«**Զեմ** եկել մնալու, այլ միայն մատենագա-  
րանում աշխատելու կ գեղջուկ երգեր հավա-  
քելու։ Առաջին գործս երեկ վերջացրի, երկ-  
րորդն եմ սկսելու վաղը։ Մինչև սեպտեմբերի  
կեսերը կ. Պոլիս կիրակամ։ Վաղը կերպամ գու-  
զերը։ Բավական նոր բաներ են զուրս եկել։

... իմ ընկերներս անպաշտոն են թե՛ վանքում, թե՛ դուրսը: Մեկը վարժապետ է ոռուսաց գիմնազիայում, մյուսը բաշված. Կարապետ Սրբազնութեան նույնիսկ սենյակ չունի վանքում, այլ խցիկել է Հոսանքի վարդապետի սենյակում ու պարապում է մատենադարանում՝ Գարեգին վարդապետի հետ միասին: ... Ես էլ հաղիկ եմ եկել այս ճահճից. ո՞ւ կը եմ գալու նույնիսկ մեկ բերան շասացին, թե ինչու չե՞ս գալիս, ինչո՞ւ չես մնում: Վանքի երգեցողությունը գյուղականին վատ է»<sup>2</sup>:

1913 տարվո գեղարվեստական անցրելու նոթելու ատեն «Նավասարդ»-ի մեջ, մենք կառուինք:

«Կոմիտաս վարդապետ այս տարի ևս շաբունակց իր երաժշտական առաքելությունը, հակառակ պոլսահայ տիրապններու վիվուլսներուն, թեև Թուրքիա ներքին տաղապնապներուն ընդհատման ենթարկվեցավ իր սկսած գործը, այնպիս որ՝ տարակույն սկիզբը հաղփակ կրցավ երկու համերգներ տալ թերայի մեջ, երկուքն ալ առավելապես ժողովրդական երգեր բազկացած ծրագիրներով։ Ասկե զատ, Կոմիտաս վարդապետ իր մասնակցությունը բերավ Պոլսու մեջ սարված բոլոր կարևոր հանգեստներուն։ 1913-ի մայոր դեպի Էջմիածին և շրջական երրորդ կատարած իր պատույտները, ըստ իր իսկ հայտարարության, բավական նոր ու թարմ ատաղձներ հայթայթած են իր ապագա ուսումնասիրությանց և դաշնավորությանց համառ։»

<sup>1</sup> «Ժամանակակիցները կոմիտասի մասին», էջ 73—74:

<sup>2</sup> Պատմա-բանասիրական հանդես, 1958, Ա, էջ 265—266:

<sup>3</sup> «Նավասարդ», Կ. Պոլիս, 1914, էջ 269:

Նոր ու թարմ ատաղձով բեռնափոք, Կոմիտաս Պոլիս կդառնար օգոստոսի վերջերուն, նոր ու թարմ թափով մը լծվելու համար իր ընդհատված առաքելութեան:

Ա. Եղբայրության կույտեցած

Կոմիտաս Կովկասին Պոլիս կդառնար ճիշտ  
ըռպեկին: Ոչ միայն անոր համար, որ իր ներ-  
կայությունը անհրաժեշտ էր տոնական օրե-  
րուն, որոնք Պոլիսը պիտի զգրովին շուտով,  
այլ որովհետև իր բացակայության հայ ե-  
րաժշտությունը անափործ քանի մը պահեր  
ապրեր էր կրկին: Դարձյալ սկսեր էին զայն  
ուրանաւ:

Հազվագեպորեն այնքան միահամուռ և  
այնքան անխառն եղած էր օտար գնահատ-  
առնքը գեպի մեր արժեկները, որքան եղած  
էր Կոմիտասի և իր գործին հանդեպ: Չէր  
գտնված օտար երաժշտագետ մը, որ շփվեր  
Կոմիտասի հետ և չկախարդպեր անոր ցուց  
տված գոհարներն: Ու այն պահեն սկսյալ,  
երբ ան դեմ հանդիման էր եկեր օտար ե-  
րաժշտական աշխարհին հետ, դափնիներ էր  
քաղեր ոչ միայն իրեն, այլև հայ երաժշտու-  
թյան համար: Այդպես էր պատահեր Բեոլիին  
և Փարիզ հայ երաժշտության մասին իր զե-  
կուցումներուն ատեն, ինչպես բոլոր այն հա-  
մերգներուն և երաժշտական ելույթներուն  
առթիվ ալ, զորս ունեցեր էր եվրոպական մեծ  
ոստաններու մեջ: Սրբեն հատոր կիազմեին  
ոչ միայն օտար մամուլին մեջ սփոված գո-  
վասանական տողերը նման առիթներով,  
այլև անվերապահ զրվատիքները, զորս ստո-  
րագրած էին երաժշտական մեծ հեղինակու-  
թյուններ մասնագիտական պարբերականնե-  
ռու մեջ:

Եկ, սակայն, շրջանակներ կային բնարանաբար, որոնց անձանոթ էր գեռ հայ երզը, ինչպես առհասարակ հայ ժողովորդի բովանդակ հոգեկան գանձը: Այդ գանձը: Այդ գանձը անձանոթ էր երկար ատեն օտարին: Ելլուսպան մեղ շեր լրիվ ճանշեր մինչև մեր օրերուն: Առավելապես ան մեղ կճանշնար մեր տարրեր բարեմասնոթյուններով, մեր կատարած տնտեսական գերով, մեր ապրած երկիրներուն մեջ, դեր, որ երբեմն ստվերով կօծեին այդ երկիրներն անցնող օտար ճանապարհորդները, մեղ ներկայացնելով իբրև շարչի կամ նման հեղինական մակդիրներու տակ: Իսկ վերջին դարուն մեր կրած հալածանքներն է, որ առավելապես արձագանք գտած էին արեմուտք, և ան սկսած էր մեղ ճանշնալ իբրև ժողովուրդ մը, որ կշարդվի ոչխարի նման, և որուն վրա շատ-շատ մեղքնալ կարելի էր: Ու շատ նոր էր միայն, որ Ելլուսպան սկսած էր մեղ ճանշնալ մեր հոգե-

կան արժեքներուն մեջ ալ՝ տակավ ծանոթանալով իմացական այն գոհարներուն, զորս մեր դարերը ձգեր էին իրենց ետևեն:

Ու շատ ալ զարմանալի չէր, երբ հայ մտավորական մը՝ կը ուն Համբարձումյան, այն ատեն դեռ երիտասարդ, նախանձախնդրությամբ մը, որ պատիվ կրերեր իրեն, «Աղատամարտ»-ի մեջ թնդացոց լուր մը, թե հայ երաժշտությունը անտեսած է երաժշտական համայնագիտարանին մեջ:

Այդ անտեսումը աննշմար անցներ գուցե, եթե պատահեր բանի մը տասնամյակ առաջ: Բայց վրդովեցոցի էր, երբ ան տեղի կունենար պահու մը, երբ արդեն հայ երաժշտությունը իր գանձերը սկսեր էր փոել աշխարհի առջև և ան ալ մասնագիտական ձեռնարկի մը կողմե, որ տեղյակ պետք է եղած ըլլար անոնց ստեղծած հետաքրքրության և, մանավանդ, երաժշտագետներու հրապարակային արտահայտություններուն:

Եվ, հետևաբար, պետք էր անպատասխան թողով այդ զանցառությունը: Հոդվածագիրը Կոմիտասն կակնկալեր այդ պատասխանը:

### III.—Երբ հայն է, որ ինքինք կորանա

Արհամարհանքը հայ երգին հանդեպ օտարեն չէր գար միայն: Օտարին հետ մեկտեղ հայն ալ չէր ճանչնար դեռ իր արժեքները: Արդեն ամբողջ դարի մը վեր հայ անցյալը իր ընդերքը բացած, իր հարստությունները ցուց կու տար մեղի: Մեր մատենագիրները կտպագրվեին, մեր լեզուն կուսումնասիրվեր, մեր պատմությունը կիսուղարկվեր իր միջին խորշերուն մեջ, մեկ բառով՝ կվերցվեր դարերուն վրա ծածկված թանձը քողը: Բայց մարդիկ, խավարեն նոր դուրս ելած, ի վիճակի չէին ամեն ինչ ճշգրիտ տեսնելու: Դեռ չէին կրնար շոշափել իսկական դերը, զոր հայ ժողովուրդը կատարած էր ինքը այդ բոլորին մեջ: Չէին կրնար ըմբռնել, որ այս փոքրիկ ժողովուրդը, որ փոթորիկներ ու աղեաներ ճանցեր էր միայն, մեծ էր եղած իր հոգեկան գանձով, իր ստեղծագործությամբ, և այս բոլորեն վեր՝ նաև իր համարելու ձիքով ու անոր պարզեած ինքնատիպությամբ: Ամեն ինչ օտարեն գողցված տեսնելու մոլորությունը դեռ կդիմանար մարդոց մեջ, անոնք կշրունակեին փոքր տեսնել իրենց ժողովուրդը:

Ստուգիվ, Կոմիտասի գործունեության տենդու այդ պահուն Պոլսո մամուլին մեջ երկու հոդված լույս տեսան հանկարծ, որոնք կիորդեին կասկածի տակ ձգել հայ ինքնուրուցն երաժշտության մը գոյությունը: Տապած «Աղատամարտ»-ի մեջ, անոնք մտքեր պրդարեին գուցե, եթե անպատասխան ձգվեին: Բայց անոնք բարեգեալ եղան, որովհետեւ ա-

ոիթ դարձան, որպեսզի մեկանգամ ընդմիշտ հայ երաժշտությունը աշխարհին հոչակե իր ինքնուրուցնությունը:

Հոդվածագիրներին առաջինը դոկտ. Հարություն Թերեաբյանն էր, հայտնի դեմք մը հայ մտավորական աշխարհին մեջ: Երկար ատեն Պոլսո հայ հանրային կյանքին մեջ գործոն դեր կատարելի հետո ան տարիներին ի վեր բաշված էր նյութությունը և կպարապեր նաև բանասիրությունը՝ իրավագետի համբավ ևս վայելելով: Հավականաբար մոտեն անտեղյալ, հայ երաժշտության շուրջ տեղի ունեցած հետազոտություններուն և անոնց կատարած հայտնության, կմերժեր ընդունել հայ ինքնուրուցն երաժշտության գոյությունը մը: Պատկառելի հայ գործիչը հանդգնություն կունենար վճռելու հանկարծ, թե «ըստ իս, հայկական երաժշտությունը ըսված բան մը գոյություն չունի՝ բառին գիտական առումով... Եղածներն ալ ասորա-բյուզանդական և Հնդկա-պարսկական ազգեցությունը կը լիրեն»: Իր այս անհեթեթ վճիռը տալու առթիվ կազմականացնելու տպիտությանը, ըսկելով. «Կտեսնեմ, որ Փարիզի երաժշտագետ վարպետներն ալ կհաստատեն»:

Երկրորդ հոդվածագիրը Սերովը քահ. Պուրայանն էր, Աղաբաղարեն: Նախկին աշակերտ համբավավոր Համբարձում Զերյանի և ձայնագրագետ ինքն ալ, Աղաբաղարի միջ երաժշտությունները կու տար մը, բահանա ձեռնադրվելի առաջ: Այս միամիտներեն էր աս ալ, որոնք հայ երաժշտությունը արեկլյան արվեստին հարկատու կսեպեին՝ զուրկ ինքնատիպ գրոշմե: Մանկությանս զիս ալ ունեցեր էր իբր աշակերտ և մեր հին այդ կապեն բաջակերված՝ նամակ մը գրեր էր ինձի ինքրելով ներփակ հոդվածը տպել տալ «Աղատամարտ»-ի մեջ: Իր գործիչը միջ տարբեր բառերով կրիկներ Թերեաբյանի գրածը, մերժելով հետևաբար ինք ևս գոյությունը հայ ինքնուրուցն երաժշտության մը: Հոդվածը լույս տեսավ թերթին մեջ: Անոր տեղ տալով Զարդարյանի նպատակն էր Կոմիտաս վարդապետ հարկադրել հրապարակային բացատրությունը մը, մեկ անգամ ընդմիշտ վերջ տալու համար ըրթմնչյուններուն:

Պետք էր որ իր պատասխանը գտներ այն անհեթեթ կարծիքը, որ կիստանար հայ տերտերին հոդվածին մեջ. «Հայ լեզուն ու գրականությունը ասորական ու հունական լեզուներու կազմական կաղապարին վրա ձեափոխություն՝ իր տառերեն սկսելով... Երբ հայկական ուրուցն քաղաքականությունը մը գոյություն չունի, բնաբանաբար գոյություն չունի նաև հայկական երաժշտություն մը»:

Ջախջախիչ պատասխան մը պետք էր այս  
ախմարաբանության։  
Այն կոմիտասն միայն կրնար գալ:

#### IV.—Բոլոր որացողներուն դեմ

Ուրացողներուն դեմ մաքառելու հոգը Կո-  
միտասի ուսերուն ինկավ դարձյալ։ Շատ ան-  
գութ է հաճախ հայ ժողովուրդը։ Ան շատ բո-  
կնեն իր մեծ մարդոցը ուսին։ Չի թողուր, որ  
անոնք ամփոփված մնան իրենց բուն զերին,  
իրենց իսկական առաքելությանը մեջ, և զա-  
նոնք հշարշարե ուրիշ անթիվ աքնություննե-  
րով։

Հայ ժողովուրդը ալզգես վարվեցավ Կո-  
միտասին հետ ալ, ինչ որ կապ ուներ հայ  
երաժշտության հետ, անկե սպասեց ու պա-  
հանչեց, որ ան երդ հավաքե ու դաշնավորե,  
խումբ մարզե և երգել տա, երգե և ինքը,  
միրատե անցյալը ու հայ խազերուն գաղտ-  
նիքը կորզե, ուսումնասիրություններով ալ  
պարապի և հայ երաժշտության փառքը երթա-  
աշխարհին ևս պատմե։ Ու այս բոլորն հե-  
տո, ավաղ, պատասխանե քրտմնչյուննե-  
րուն ալ, դարձի՝ բերե անհավատները։

Հայ ժողովուրդը շատ ալ մեղավոր չէր այս  
ուղորին մեջ։ Անոր միակ մեղքը այն էր, որ  
Կոմիտաս մը միայն ծներ էր բոլոր այս աշ-  
խատանքներուն համար։ Ու Կոմիտաս, գի-  
տակից ատոր, իր գյուղի ծուց իր ժողովորդի  
ամեն մեկ պահանջին...

Ու ան էր, որ մեզ համարձակություն տվավ  
ամեն ինչ իրմն սպասելու։

Ինչպես ուրիշ առիթներու, այս անգամ  
սույն տողերը գրողին վիճակվեցավ՝ երթալ  
վարդապետին գուոր քախել և խնդրել, գրեթե  
պահատել, որ անպատասխան շթողու մար-  
դոց՝ հայուն ու օտարին, այս անոպա ար-  
համարհանքը։ Կոմիտաս չէր սիրեր մամուլով  
հրապարակ գալ։ Ուսումնասիրական և քննա-  
դատական այն էջերեն հետո, զորս ատենեն  
ստորագրեր էր «Արարատ»-ի մեջ, և բացի  
նաև այն հոդվածեն, զոր 1907-ին լույս ըն-  
դայեց «Անահիտ»-ի մեջ հայ գեղջուկ ե-  
րաժշտության մասին, ան որնէ բան չէր  
հրատարակած հայ թերթներու մեջ, եթե հաշ-  
վենք այն զույգ մը ակամա պատասխաննե-  
րը, զորս ուղղեց «Տաճարին և ժամանակին»՝  
անոնց մեջ լույս տեսած մայրահաշությանց  
առթիվ։ Այնպես որ՝ զյուրին շեղավ կորզել  
իրմե հոգված մը այս նոր անհեթեթությանց  
մասին։ Այնուամենյանիվ զիշեցավ ի վերջո,  
և մեզ հանձնեց իր գրությունը, որ «հայը ու-  
նի ինքնուրույն երաժշտություն» խորագիրը

կկրեր և որ տպվեցավ «Ազատամարտ»-ի  
մեջ։

Կոմիտաս իր հոգվածին մեջ նախ կանդրա-  
գառնար երաժշտական համայնագիտարանին  
մեջ հայ երաժշտության անտեսման, զայն  
վերագրելով, սակայն, համայնագիտարանը  
կազմողներուն անգիտությանը, բան մը, որ  
ինքնին հասկնալի էր, բանի որ հայ երա-  
ժշտությունը դեռ ուսումնասիրված չէր լիո-  
վին։

Կոմիտաս կըսեր.

«Համայնագիտարան խմբագրող մասնա-  
գետներու մեր ազգային երաժշտությունն  
անտեսելը ոչ իրավունքի և ոչ էլ անիրավու-  
թյան խնդրի է, այլ լոկ շգիտության։ Զի մեր  
երաժշտության (հատկապես հնի) նյութերն  
անմշակ են, ի մի ժողովված, ուսումնասիր-  
ված և քննագատված չէին, որովհետեւ մի-  
շոցներ և մասնագետներ կպակսին։ Օտար  
երաժշտաներին ուսումնասիրել են մերը  
ch. vii lotteau, J. Féris, O. Fleischer և ու-  
րիշներ, բայց նյութի պակասության պատ-  
ճառակա զրական արդյունքներ չեն տվել, թեև,  
իրավամբ, բոլորը նկատել են, որ մեր երա-  
ժշտությունն ինքնուրույն է, բայց երաժրշ-  
տական օրենքներով փաստել չեն կարողա-  
ցել։»

Կոմիտաս կակնակեր հետո իր կատարած  
փորձերուն, հայ երաժշտությունը լրիվ ճա-  
նաչելու համար, շեշտելով, որ առաջին հեր-  
թին անհրաժեշտ էր եղած պարզել հայ խա-  
զերուն գաղտնիքը։

«Իսկ ես, օտար և ազգային (մանավանդ  
հայ ճեռագիրներու) աղբյուրներեն ճեռքս ըն-  
կած պատմական աղբյուրներեն արտագրել  
եմ, բայց ոչ դասավորել եմ, ոչ ուսումնա-  
սիրել և ոչ քննագատել, այլ միայն իբր հում  
նյութ, ուրիշ մասնագետներու օգտակար լի-  
նելու դիտավորությամբ ժողովել եմ։ Առանձ-  
նապես ուսումնասիրությանս առարկան եղել  
են հին հայ խազերը, որոնց մասին, ի միջի  
այլ ստիպողական և մասնագիտությանս  
վերաբերյալ պարապմանց, բան տարվան  
ընթացքում հազիվ կարողացել եմ բավակա-  
նաշափ նյութեր հավաքելով, գասավորելով  
մի որոշ գաղափար կազմել, թե ինչ ծագում,  
զարգացում ու անկում են ունեցել, հազիվ,  
որովհետեւ և հավաքողը, և ուսումնասիրովը  
միայնակ եմ եղել։ Այս աշխատությունն  
իսկ կատարել եմ լոկ այն նպատակով, որ  
խազերու նշանակության թափանցելով, կա-  
րողանամ մեր նախնի եղանակները ճեռա-  
գրերի մեջնեն հանել ու արդի պահանջներուն  
հարմարցնելով եկեղեցական երաժշտությու-

<sup>4</sup> «Ազատամարտ», 1913 սեպ. 18 (հոկտեմբեր 1),  
№ 1316.

նը ոտքի կեցնել, իսկ աշխարհիկ երաժշտությունն արդեն կապրի հայ գեղջուկի շնորհիվ: Եկեղեցականն ու աշխարհիկը ունենալով, մեր ազգային ամբողջական երաժշտության մասին ստույգ գաղափար կունենանք: Ահա այս մտքով մղվեցա խազերու մասնակի ուսումնասիրությունը ձեռնարկած պահուս:

Կոմիտաս իրավամբ դիտել կու տար հետո, թե «Այսպիսի աշխատանքներն անթերի և խղճմատօրնեն կատարելու համար մարդու կյանքը հերթի չէ: Եվոպական որևէ ազգի երաժշտության պատմությունը ուսումնասիրելու համար, հարյուրավոր մասնագետներ են աշխատել, դարերով են քննադատել, տասնյակ ընկերություններ են օժանդակել և հարյուրավոր հատորներ են հրատարակվել: Բարիբարի ցանկություններով ազգային երաժշտության պատմություն չի գրվիր, մանավանդ՝ հայ երաժշտություն:

Ինչ կվերաբերի համայնագիտարանին մեջ հայ երաժշտության անտեսման, Կոմիտաս աղետ չէր նկատեր այդ բանը, որովհետեւ ան կրնար սրբագրվել օր մը, երբ հայ երաժշտությունը ինքը պարզեր իր գիմագիծը.

«Երաժշտական համայնագիտարանը մի բառարան է, որ զեռ սրբագրվելով, կարող է նորեն տպագրվել: Սթե այս անգամ անոր չշերում չերևա հայ երաժշտության պատմությունը, պատրաստվենք զպրոց հիմնելով, մասնագետներ հասցնելով երկրորդի համար: Շատերն ըստին մեզի, թե զոնե մեկ համառոտագրությունը գրվի շատ լավ, բայց չէ՝ որ համառոտը կկազմվի ամբողջութենան: Ո՞ւր է ամբողջությունը: Փոխանակ մուրացածու անհիմն կարծիքներով ու պատմություններով զբաղվելու, նախ ուսումնասիրենք ու մեր երակացությունները փաստենք՝ հենքելով ճշմարտություններու և երաժշտական ընդհանուր օրենքներու վրա, ապա խոսենք»:

Իր հոդվածին մեջ Կոմիտաս չէր կրնար շանրանա, մանավանդ, հայ ուրացողներուն վրա, սկսելով հայտնի քարոզիչ, գիտնական ու խմբագիր, հանգուցյալ Խորեն եպիսկոպոս Ստիլիանեն, որ անցյալ վերջերուն «Հրապարակ նետեց այն կարծիքը, թե հայ գեղցուկն անգիր բանահյուսություն չունի, այնինչ, օրինակ, ուսւ մուժիկն ունի, ուրեմն մեր ժողովուրդը բանաստեղծական շնորհք չունի, և պատմական դեպքերն ու կյանքի երևություններն անզգա կթողուն զինքը», անձեռթ կարծիք, զոր հերեց հետո իր թանկագին ուսումնասիրություններով հույը հայ անվանի բանաստեղծներուն, որպիսին էին՝ Գարեգին և պա: Սրբանձայանը, Գարեգին վարդապետ Հովսեփիանը, Մանուկ Արեգյանը, Սարգիս Հայկոնին, Չոպանյանը, Գանիկյանը, Լազարյանը, Կանայանը, Զիթու-

նին, և որ սակայն նոր օրերու մեջ իր պաշտպանները կդատներ հանձին դոկտ. Զ. Թերեաբյանի և Սերովիք քահանա: Պարմաջանի: Իր հոդվածին մնացյալ մասը Կոմիտաս կնվիրեր այս երկու վերջիններուն պարզած նոր անհեթեթությանց, և կդրեր ի միջիայլոց:

«... Բայց աշխարհի վրա ո՞ր երաժշտություն անխառն ու անապակ է: մեր գիտցածով՝ միայն անասուններինը, որոնք նույն ձայնն ու ելաչքը կերպեն, զի փոխառության շնորհք չունեն:»

Ազգերու փոխադարձ ազգեցությունն անուրանալի և անհերքելի փաստ է, որովհետեւ անազգեցիկ մնացած ազգ չի կա: յուրաքանչյուր ազգ, ինչ որ չունի, ունեցողեն, պետք զգացած ժամանակ, փոխ կառնե ու կազգայնացնե:

Ազգի մը լեզուն ու գրականությունը կարող են ձևափոխվել ու զարգանալ, օրինակ, առնելով ուրիշ ազգերեն, բայց երբ ան ինքնաշատուկ լիզու և գրականություն ունի, ունի և ինքնուրույն երաժշտություն: Ամբողջ արեմայան ազգերը զարմացան, սնունդ առնելով հին հունական բաղաբակրիթյան բեկորներն լատինականի միջոցով, բայց և այնպես, յուրաքանչյուր արևմտյան ազգ ունի ուրույն երաժշտություն, որ ոչ հույն է և ոչ լատին:

Յուրաքանչյուր ազգի երաժշտությունը իր ազգի հնչական ելեկչներնեն կծնի ու կծավալի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնչակությունը, ուրեմն և համապատասխանող երաժշտություն:

Որքան զանություն կար, սակայն, Կոմիտաս վարդապետի հոդվածին վերջաբանին մեջ:

«Գալով ինձ, մասնավորապես, ոչ ոք ինձմեն պահանջելու իրավունք ունի, որ ես հայ երաժշտությունն իր բոլոր ճյուղերովն իմանալ պարտավոր եմ, ես իմ մասնագիտությունն ունեմ, կարող եմ անով միայն օգտակար լինել և ամենենին միտք չունիմ հազար բանի ծառայել: Մեկ բան կարող եմ անել, և լավ անել՝ իմ պատրաստության շափով: Ուստի, օրաթերթերու մեջ աննպատակ հոդվածներով զբաղվելու ո՛չ ժամանակի և ո՛չ շահ ունիմ: Կուզեմ հանգիստ մնալ, որ զործել կարենամ: Այսուհետեւ այսպիսի հոդվածներուն պատասխան չենք գրելու:»

Ու զանության կհաջորդեր արդեն հեղությունը.

«Ենեղ հայ ժողովուրդ, ազգ ես և ինքնուրույն այնքան, որքան մյուսները: Այդ ոչ ոք կարող է հերքել: Ունիս հատուկ լեզու՝ կլոսուիս: Ունիս հատուկ մարդաբանական կազմ, որով կը զատվիս այլ ազգերեն և անոնց կազմեն: Սա-

վայն սիրտդ, որ զգացմանդ աղբյուրն է, փոքր չեղել, այլ մի ինչ-որ ասորա-բյու-պանգական և հնդկա-պարսկական է եղել: Ճանապահը հայ ճանապահը հայ կա: Թերենն ականջ շատ կարճ է. բանեն փաստ՝ շատ երկար»:

Կոմիտաս շատ շանցած, աշխարհին պիտի տար այդ փաստը...

## V.—Խովերուն համար

Կոմիտաս իրեն համար փակված հոշակեց վեճը: Մեր թերթը ևս ուզեց փակել զայն:

Բայց ան զեռ պիտի չփակվեր:

Կոմիտասի հոդվածը ստացած էինք արդեն, երբ նոր գրություն մը առինք կեռն Համբարձումյանեն, որ կըսեր.

«Երաժշտական համայնագիտարանի տնութեն պ. կավինյաք Փարիզ վերադարձած ըլլազգով, կրցա տեսնել զինքը: Պ. կավինյաք հայտարարեց ինձի, թե իր բացակայության միջոցին համայնագիտարանի խմբագրական մարմինը որոշած էր տեղ տալ հայ երաժշտության պատմության մասին հայ երաժշտաներու կողմեն գրվելիք ուսումնասիրություն մը, բայց անկե ի վեր զգանվեցավ մեկը, որ հաճճ առներ այդ աշխատությունը կատարել: Խոյ այժմ արդեն ուշ է, համայնագիտարանի խմբագրությունը ավարտած ըլլալով մեծ մասով:

Պ. կավինյաք կըսե, թե ասկե ետք չի կրնար նոր աշխատություն ընդունիլ, և թե կցավի, որ պիտի չկարենա համայնագիտարանի մեջ առանձին բաժին մը հատկացնել հայ երաժշտության: Միայն Թուրքիո երաժշտության վրա խոսվելու ատեն ծանոթություններ պիտի տրվեն. նաև հայ երաժշտաներու վրա, բայց այսափ միայն:

Խոսելով հայ երաժշտությունը ծանոթացնելու նպատակով, Կոմիտաս վարդապետի քանիքրուն վրա, պ. կավինյաք սա նշանակալից հայտարարությունը ըրավ. «Խովերու առջկ խոսելու տեղ, ավելի օգտակար գործ մը կատարած կըլլա, եթե լսողներու առջկ խոսիս»<sup>5</sup>:

Մենք գարձալ Կոմիտասի գուոր ափ առինք: Կավինյաքի մարտահրավերը անոնցմել չէ, որոնց վրային կարելի ըլլար լուսությամբ անցնիլ:

Կոմիտաս անդրդվելի մնաց, սակայն: Ան չուզեց անգամ մը ևս հրապարակ գալ: Մեր ըսավ միայն, թե խովերը իրենք կավինյաք-ներն են, թե ինքը ահա, մեկուկես տասնյակ տարին ի վեր, այն է՝ 1898-ին ասդին,

խոսած է լսողներու առջկ ալ, Ու ան, որ չեր ուզած երբեք խոսիլ իր վրա, ինչպես և իր ըրածներուն, մեղ ցուց տվալի կարգ մը նամակներ, զորս ոչ ոքի չեր ուզած ցուց տալ մինչև այն ատեն, թեև չեր փափաքեր, որ անոնք տպակին նույնիսկ հիմա: Ըսինք իրեն, որ այդ նամակներուն տերը այլևս ինքը չեր, թե անոնք հայ ժողովուրդին կպատկանին ար: Անոնցմ երկուքը գրեթե բռնի առավ ձեռքեն կիպարիտ նազարյան ու թարգմանեց մեր թերթին համար:

Հրատարակակություն տալու առթիվ այդ զույգ նամակները «Աղատամարտ» հետեւյալ ծանոթությունը կկցեր անոնց.

«Հարմար առիթի մը վերապահելով հայտնել մեր կարծիքը Փարիզի համայնագիտարանին առթիվ մեր թերթի մեջ բացված վիճարանությանց առթիվ, փակված կհայտարարենք խնդիրը: Սակայն, այս առթիվ մենք չենք կրնար աննշմար թողով Փարիզի համայնագիտարանին տնօրեն պ. կավինյաքի անիրավ մեկ կարծիքը Կոմիտաս վարդապետի մասին, որ իբրև թե ավելի լավ կընե եղեր հայ ինքնուրուն երաժշտության մը զոյտթյունը ապացուցանելով ոչ թե խովերուն առջկ, այլ լսելու կարողությունը ունեցողներուն առջկ: Վկա այն բաղմաթիվ դասախոսությունները, զորս վարդապետը տված է թեուի և այլուր, ոչ միայն լսելու կարողությունը ունեցողներուա, այլ նաև երաժշտական մեծ հեղինակությանց առջկ:

Դեռ այս օրերս առիթն ունեցանք տեսնելու մեկ քանի նամակներ, զորս երաժշտական հեղինակավոր անձնավորություններ ուզզած են Կոմիտաս վարդապետի, երբ ան, 1899-ին, գեռ նոր ավարտած էր երաժշտական ընթացքը, իր անդրանիկ երկու դասախոսությունները կըներ թեուինի մեջ, Միջազգային երաժշտական ընկերության հրավերով, որուն սարքած անդրանիկ դասախոսություններն էին միանգամայն:

«Ավելորդ չենք դատեր այդ նամակներեն մեկ քանի ներկայացնել թարգմանարար»<sup>6</sup>: Նամակներն մեկը թեուինի համալսարանի երաժշտության պատմության ուսուցա-

<sup>5</sup> «Աղատամարտ», 1913 սեպտ. 18 (հոկտ. 1), թիվ 1316:

<sup>6</sup> «Աղատամարտ», 1913 սեպտ. 21 (հոկտեմբեր 4), թիվ 1349:

պետքն էր, և հետեւալ բովանդակությունը  
ուներ.

«Բեռլին, 19 հունիս, 1899.

### Մեծարգութեր վարդապետ,

ինձի բոլորովին առանձին ուրախություն  
մըն է, պատիվ ունենալ Միջազգային երա-  
ժշտական ընկերության թեուլինի մասնա-  
ճյուղին անկեղծ ու չերտագին շնորհակալու-  
թյունները մատուցած ելու Զեղի՝ այն արտա-  
քո կարգի սիրահոմարության համար, որ  
կրկին դասախոսությամբ մեզի նվիրած եք  
հայ երաժշտության պատմությունն ու էու-  
թյունը: Այն խորոնք հարգանքը, որով Դուք  
մեզմե բոլորովին հեռու եղող բարձր ու զար-  
գացած քաղաքակրթության մը վսեմ կարո-  
ղությունը մոտեն ճանշուցիք մեզի՝ ա-  
նակնկալ կերպով հմտալից ներածությունն  
այն բաներուն, որ Արևմտյան հնագույն քա-  
ղաքակրթության ժամանակներու ծանոթու-  
թյան համար խսկանեա առանձնակի կերպով  
նշանակալից են, Զեր դասախոսելու և երգե-  
լու կատարելագործ արվեստը, ասոնք այն-  
պիսի բաներ են, որոնք մեզ զարմացնել կա-  
րող էին և որոնք Զեր ունկնդիրներեն ոչ մե-  
կոն հիշողության մեջ պիտի թառամին: Ա-  
սով Դուք ոչ միայն մասնաճյուղիս շնորհա-  
կալությունը, այլև ապահովաբար Զեր հայ-  
ունիքի քաղաքակրթության արժանիքի գնա-  
հատումն ստացաք:

Ներկայիս իմ խորին հարգանքներս կհա-  
մարձակիմ մատուցանել և պատիվ ունեմ,  
մեծահարդ տեր վարդապետ, ստորագործու-  
իրեն Զեր բոլորաններ՝

### Դոկտ. Մաք Ջայֆերտ

(Քարտուղար Միջազգային երաժշտական ըն-  
կերության Բեռլինի մասնաճյուղի և ուսուցա-  
պետ Բեռլինի համալսարանի երաժշտության  
պատմության)

Երկրորդ նամակը նույնպես անվանի երա-  
ժշտագետն մըն էր, Միջազգային երաժշ-  
տական ընկերության նախագահ Օսկար  
Ֆլայշերն.

«Բեռլին, 16 հունիս, 1899.

### Հատ Հարգելի տեր վարդապետ,

իմ պարտք կհամարեմ Զեղի, հանուն Մի-  
ջազգային երաժշտական ընկերության, շնոր-  
հակալության հայտնել այն սիրահոմարու-  
թյան համար, որով Դուք Զեր դասախոսու-  
թյանց միջոցով հայ երաժշտության մասին  
մեր ընկերության նպատակները կանխեցիք:  
Զեր հմտալից և խորիմաստ դասախոսու-  
թյանց միջոցով խորոնք հաճույք մը ձգել  
տվիք դեպի այն երաժշտությունը, որ մեզ  
համար ցարդ գրեթե գոց էր, և որ մեզի  
արևմտականներու, շատ բան ուսուցանել

կարող է: Այն աշխատությունը, որուն Դուք  
ձեռնարկած եք, փոքր չէ եղած, և ես խոսած  
կը լամ հանուն այն ամենքին, որոնք Զեր դա-  
սախոսությունները լսեցին, և որոնց մեջ կա-  
յին առաջնակարգ նշանակություն ունեցող և  
գիտական աշխարհաճոշակ մարդիկ, եթե  
ըստիմ, թե Զեր ջանքն ու ճիզը զուր չեն: Դուք  
արդի գիտության անգին ծառայությունները  
կարող եք մատուցանել, եթե Զեր աշխատու-  
թյունները հրատարակեք, և այդ առթիվ, եթե  
կարողանամ օժանդակությունն ընծայել Զե-  
զի, մեծ ուրախություն մը պիտի զգամ:

Մեծագույն հարգանքը  
Զեր անձնվեր

Օսկար Ֆլայշեր

(Նախագահ Միջազգային երաժշտական ընկե-  
րության և ուսուցապետ Բեռլինի արքայական  
համալսարանի երաժշտության պատմության)»

Կոմիտաս միայն խուզերու առջև չէր խոսած  
ուրեմն...

\* \* \*

Կոմիտասի հոդվածն արդեն տպված էր,  
երբ Փարիզեն իր ճայնը լսցուց տաղանդա-  
վոր այն երգչունիքին, որ օր. Մարգարիտ Բա-  
բայանն էր Առաջիններեն էր եղեր ան, որ  
Չոպանյանին հետ կողքին էր կեցեր Կոմի-  
տասին, երբ ան գացեր էր իր իր առաջին ե-  
լույթներն ունենալու Փարիզի մեջ, հանուն  
հայ երաժշտության, և պիտի կենար հնտա-  
գային ալ անոր բոլոր ձեռնարկներուն մեջ,  
մեկն հանդիսանալով նաև անոնցմե, որոնք  
իրենց գուրգուրանքը Կոմիտասին կապված  
պահեցին հոգեկան անոր տագնապեն հետո  
ևս, ինչպես գերեզմանին ատեն ալ:

Թեև վճռած հրապարակային այս վեճը  
փակել, «Ազատամարտ»-ի խմբագրությունը  
չէր կրնար, հետեւաբար, տեղ շտալ օր. Բա-  
բայանի գրության, որ անգամ մը ևս կու գար  
ապացուցանել, թե միայն խուզերուն առջև  
չէր, որ խոսած էր Կոմիտաս, այլ նաև այն-  
պիսի մարդոց, զորս չէր կրնար արհամար-  
հել երաժշտության պատմությունը:

Օր. Բաբայանի գրությունը լուս տեսավ  
երկու թիվերով: Իր հոդվածին առաջին մա-  
սին մեջ տաղանդավոր արվեստագետունիքին  
գիտել կու տար, որ «Ազատամարտ»-ի եր-  
կու հոդվածագիրներն ալ, թե գոկտ. Թե-  
րեաբայան և թե Պուրմայան քահանա, հավա-  
նաբար, կարդացած էին երաժշտական պար-  
բերականի մը, այն է՝ Փարիզի Լեցուց  
պարբերականին մեկ հոդվածը

7 «Ազատամարտ», 1913 հոկտ. 3/16 և 4/17, № 1329  
և 1330:

1907-ին<sup>8</sup>, թարգմանաբար արտապված նաև «Անահիտ»-ի մեջ «Հայ գեղջովկ երաժշտությունը» վերնագրով, ինչպես նաև՝ Զոպանանի ճառը, 1906 դեկտ. 1-ին, Կոմիտաս վարդապետի Փարիզի Հայկական մեծ նվազագանդեսին՝ «Հայ երաժշտության և բանաստեղծության մասին» նյութով, նույնպես տպված «Անահիտ»-ի մեջ<sup>9</sup>, հոդվածներ, որոնք «փայլուն կերպով պիտի պատասխանեին Հարգելի հոդվածագրերի կողմից առաջդրված հարցերին և ամենից առաջ պիտի բացատրերին հայ երաժշտության հաստատոյրությունը»:

Օր. Թարգայան կծանրանար հետո այն աշխատանքներուն վրա, զորս մեծ երաժշտագիտներ, ինչպես՝ Frédéric Liszt, Claude Debussy, Գիլնկա, Ռիմսոկի-Կորսակով, Մուսորգսկի, Բորոդին, Grieg, Albeniz, և ուրիշներ կատարած են սարբեր ժողովորդներուն մոտ՝ ժողովրդական երաժշտության հիմքները որոնելու և զանոնք օգտագործելու համար, ու ապա կըսեր.

«Այժմ մենք՝ հայերս, բախտավոր կարող ենք համարել մեզ, որովհետև ունենք մի Կոմիտաս վարդապետ՝ մի մեծ երաժշտությունը՝ կելքովական բարձրագույն երաժշտական գիտության հետ, խորապես ուսումնասիրել է Հայկական ժողովրդական [և] եկեղեցական երաժշտություն, ինչպես ծանոթ է ընդհանրապես արևելյան, արաբական, քրդական, պարսկական, տաճկական երաժշտություններին: Նա իր տաղանդը նվիրել է մեր ժողովրդի երաժշտական զանձերը արտադրելով, գտնելով նրա առանձնահատուկ և հենց իր հությունից բխած ներդաշնակությունը: Թե ինչ տարօրինակ երաժշտական նրբություններ ունեն մեր գեղջկական եղանակները, որ ամեն անգամ ելքովայի վարպետներին ապշեցրել է, ինչպիսի երաժշտական բարդ շափեր (γυθիմ), ինչ խորություն մեղեղի կազմին մեջ՝ այդ բոլորը հետաքրքիր ընթերցողը կարող է գտնել վերև Հիշածս Կոմիտաս վարդապետի հոդվածին մեջ»:

Իր հոդվածի երկրորդ մասին օր. Թարգայան կիսուեր այն աղջեցովիթյուններուն մասին, զորս բոլոր երաժշտությունները կրած էին, և բնական էր, որ աղջեցովիթյուններ հայ երաժշտությունը և կրած ըլլար, մանավանդ այն պայմաններուն մեջ, զորս ճակատագիրը ստեղծեց հայ ժողովորդին:

Հետո կանդրադառնար այն թյուրիմացության, զոր հայ երաժշտության անտեսումը

<sup>8</sup> „Mercure musical“, 1907, № 5.

<sup>9</sup> «Անահիտ», 1907, 3—5:

<sup>10</sup> «Անահիտ», 1907, 1—2:

երաժշտական հանրագիտարանին մեջ ըստեղծեր էր ոմանց մոտ, կարծել տալով անոնց, թե հայ երաժշտությունը բոլորովին անծանոթ իմացություն մըն է երաժշտական աշխարհին համար: Այն քանի մը զեմքերու կողքին, որոնք անտեղյակ ըլլալով հայ երաժշտության, փորձված են անոր գոյությունն իսկ ուրանալ, մեծ է թիվը այն հեղինակություններուն, որոնք նույնիսկ պահածացուցած են զայն, ինչպես կգրեր օր. Թարգայան:

«Կարող եմ հաստատել անթիվ փաստերով, նամակներով ու խոսակցություններով ֆրանսիական ամենամեծ վարպետներին հետ, ինչպես՝ Vincent d'Indy (որ ինքը մեր հայկական երգի համար ներդաշնակություն գրած է), Claude Debussy, M. Ravill, F.L. Schmitz, D. de Severe, A. Roussel, L. Moullé, R. Lenormand, հանգուցյալ Bourgault Ducoudral և շատ ուրիշներ, որոնց անունները մի առ մի թվելով անկարելի եմ համարում, թե ամենքն ալ ամենաանկեղծ ու խոր հիացմունք են արտահայտել հայ գեղջկական և երաժշտական երաժշտության մասին, երբ առիթ են ունեցել ճանաչելու թե Կոմիտաս վարդապետի 1906-ին Փարիզում կազմակերպած հայկական մեծ նվազահանդեսին, թե նրա երգերին հետ և թե լսելով հայ երգչուհիներին և երգիչներին: Նորա, այդ օտար վարպետները, հիանալի գտած են և սիրել մեր գեղջկական երաժշտության բոլոր առանձնահատկությունները»:

Տաղանդավոր արվեստագետուհին կմատնանշեր այս առթիվ, թե գերման հայտնի արևելագետ Petermann դեռ 1751-ին, հիշատակած է հայ երաժշտությունը<sup>11</sup>, անկեցետու Ֆելիս<sup>12</sup> և ավելի նոր օրերու մեջ ալ Օբրին<sup>13</sup> ու հետո ընդարձակ հատված մը կարտատպեր ֆրանսացի հայտնի երաժշտագետ և գիտնական Louis Leloy-ի մեկ հոդվածեն, զրված 1906 դեկտ. 1-ին, Կոմիտաս վարդապետի սարքած հայկական նվազահանդեսին առթիվ: Իր այդ հոդվածին մեջ ֆրանսիացի երաժշտագետը կգրեր. «Ոչ ոք չափազանցովիթյան մեղադրանքը պիտի ընե ինձի, եթե ըսեմ, թե այս նվազահանդեսը հայտնություն մը և զմայլանք մը եղավ: Մենք ոչ մեկը, կարծեմ, բացի այդ մասին ծանոթություն ունեցող սակավաթիվ անձեռք, կրնար մտքեն անցընել գեղեցկություն-

<sup>11</sup> „Über der Musik der Armenier“.

<sup>12</sup> „Histoire générale de la Musique“, 1874, հատոր IV, գլուխ VI, էջ 69.

<sup>13</sup> „Souvenirs d'une Mission d'études musicales en Arménie“, Paris, 1911.

ներն այդ արվեստին, որ իսկապես ոչ եվրոպական և ոչ արևելյան, այլ ունի նկարագիր մը, աշխարհիս մեջ մեկ հատիկ, շնորհալիք քաղցրություն, խորաթափանց հուզման և աղնիվ գորովի: Եղանակներ՝ փափուկ և սակայն որոշ թափալումներով, ճկուն և կենդանի կը կըռություններ, երաժշտություն մը, որ ամբողջ սրտե կրիսի և կհոսի ինչպես չուրմը զով՝ թափանցիկ և պայծառ»:

Օրինակ Բաբայանի հոգվածին վերջին տողերը արդեն արդար գնահատանքն էին այն առաքելության, որուն լծված էր Կոմիտաս վարդապետ.

«Կմաղթեմ, որ Կոմիտաս վարդապետ իր բազմաթիվ ու օգտակար զբաղմունքներին մեջ հնարավորություն գտնե և հաճի լուսաբանել պատմական մշուշին մեջ թաղված շատ լուրջ ու հետաքրքրական հարցերը: Բայց արդյոք կարո՞ղ են ճշտիվ երևակայել հետաքրքրությունները, թե որշա՞փ գիտություն և թե ինչ ահագին հետազոտությունների արդյունք պիտի բեր մեր հեղինակավոր վարպետը, և կարելի՞ է արդյոք նրանից պահանջել այդ անելու մի լրագրական հոդվածի մեջ, երբ հատորների գործ է:

Իսկ ինչ կվերաբերի այն հարցերին, որ նրան ուղղում են հայոց երաժշտության գոյությունը ապացուցանելու համար, կարծում եմ, որ այդ բարձր երաժշտը, որ իր անձին մեջ մարմնացնում է հայոց երաժշտությունը, և որին հոգին է, որին վերածնողն է և գեղի տիեզերական մղողը, — իր ամբողջ կրակոտ, վեհ և սուրբ գործունելությամբ այդ ապացուցանում է:

Երբ տաճկահայաստանի ազգային կյանքը կարողանա զարգանալ, երբ գեղջուկը լալու տեղ կարողանա նորեն երգել, այն ժամանակ նրա գեղարվեստական արտակարգ շնորհքը նորեն երևան պիտի գա: Իսկ մոտակա ապագայում կունենանք նոր երաժշտական ուժեր՝ եվրոպական գիտությամբ սնված, որ թե իրենց խոսքը պիտի բերեն գեղարվեստական աշխարհին, թե հետեւրդները պիտի լինին մեր մեծ վարպետին և շտապեն ժողովրդական շտեմարանը բանալու, օգտվելու նրանից և նրա հիման վրա իրենց անձնական ստեղծագործությունները տալու, ինչպես արել են իրենց ժամանակին (դա շատ վաղուց չէ) ուսւ նշանավոր երաժշտները, որոնց մասին խոսեցի:

Խորապես համոզված եմ հայ ժողովուրդի ուրույն ստեղծագործական երաժշտական ուժին և համարում եմ, որ երբ նրան միջոց տրվի ճշմարտապես զարգանալու, և երբ նրա խոր վերքերը դոցվին, նա իր անոնք պիտի բեր տիեզերի մեծ երաժշտական պատմության մեջ:

Հսկած կես գար առաջ, որքան իմաստությամբ լցուն են այս գեղեցիկ տողերը, և որքան մարգարեռությամբ...

## VI.—Երբոր հոգին է խուզած

Խովերուն և խուզ ձեւցողներուն կողքին, որոնք միշտ եղան և պիտի շարունակեն ըլլալ, կային խեղճեր ալ, որոնք կիցեն իրենց հոգին, որպեսզի լույսը լիափանց ներս:

Այդպիսիներեն մեկն էր Սերովիք Պուրմայան քահանան, երբեմնի տիրացուն, որ ինձ ալ վարժապետ էր եղեր, ավա՞ղ, երբ այրութենը նոր սկսեր էի հեղեկ Աղափաղարի նախակրթարանը, և ժամ կտանեին մեզ իբրև մոմակալ և նաև անկե հետո, երբ արդեն փոխ կըսեի ժամուն մեջ, Պուրմայանի կամեթը զգալով միշտ թիսիս: Նոթա՞ ալ սորվեցուց ան մեղի, ու անոր զավազանի հարվածներուն կպարտեմ, եթե հաջողեցուց մինչև այսօր ալ միտքս պահել պապա Համբարձումին հայկական յոթը նոտաները՝ բու, է, պա, բո, խո, նե, պա:

Այդ Սերովիք քահանա Պուրմայան հանդրգնությունն ունեցավ անպատճախանի շձեկելու Կոմիտաս վարդապետի հոգվածը: Աղափաղարեն դրկված և հայ քահանաներու օրգանին՝ «Տաճար»-ի մեջ լույս տեսած գոյությամբ մը երկրորդ պապա Համբարձումին այս խպլիկ ճեռնասունը փորձեց անդամ մը ևս ծառանալ Կոմիտասի առաքելության դեմ:

«Մեծ հորելլաններու պատրաստության շրջանին դիմեցավ հայ երաժշտության ուրույնության կամ ոլ ուրույնության հարցը, որ նույն իսկ վերաբերություն ունի մեր լեզվին, տառերուն և անոնց «Հնչավորության» հետ: Փետք է նախ ըսել, որ մեծապես կփափակեմ հայ որույն, իսկատիպ և հարազատ երաժշտության մը ցանկալի գոյությանը, բայց երբ գիտական կերպով շապացուցվեր անոր գոյությունը, ի՞նչ ընելու է: բոնի ճիզով եթե կրնանք տիրանալ անոր՝ լավ, եթե չէ տեղի կոտանք ճշմարտության:

Ինձի կիվի, թե ա. Կոմիտաս վարդապետ չափազանց լավատես մըն է, այնպես որ շուղեր շատ բարակին հայիի: Կրսի ուրիշներու կարգին. «Հայերս իրավունք շոնինք, մեկուկես կարծիքով կամ պատմությունով, լսվածն սարկարը արձանագրել, զրիշ շարժել և դատել մի պատմական ազգ, որ դեր է կատարել անցյալում, կատարում է ներկայում և գեռ պիտի կատարե ապագայում, քանի շունչ կա բերանում: Մեր անցյալին վերաբերող ունէ պատմական ինդիր, որ շունիք որոշ լույս, ծածկված ըլլալով ազգային հպա-

սակության և ստրկության խավերում տպի, պատմությունն է, որ մեկուկես կամ երկու և ավելի կարծիքի հետ պիտի հնատազուե, առուղարկե ու գտնե կամ հավանական և որոշ դրակացության մը հասնի:

Կրնգունիմ, որ հայը, երբ ուրույն ազգ, պետք է որ իր երածշտությունը ունենար և անեցած ալ կրնա ըլլալ իր ուրարտական ամսաշրջանին, բայց հորմե հետե՝ ասորական, պարսկական, հունական և արաբական տիրապետություններուն տակ ընկճվեցավ, ինքնուրույն և հաստատուն ոչ մեկ լունք չունեցավ ան, և չէր ալ կրնար ունենար բնական բերումով, իմ հնանակետս պատմությունն է. ևս առ Խորեն Ստեփանե և պիտի պոսին հայտնած վարկածին չեմ հետևած ատրկորեն, ոչ ալ «մեկուկես» կարծիքի ու պատմության: Թանի որ կենդանի վկա չկանոնդրույն շուրջ, պատմություն կմնա խոսք: Ասործիք ըսլածն ալ պատմության վրա կշին-վի ընդհանրապես: Զենք ըսեր երբեք և չենք կրնար ըսել, որ «Հայ խանդու, խանդու կրնար ազգ» չէ եղած, ընդհակառակն՝ հայը իրական բաղաբակրության ամեն ձկուն, ողորկ պայմաններն ունի իր մեջ, աղիկա ճշտողն ու հաստատողը դարձյալ պատմությունն է: Եթե մենք իրավունք չունենք մեր ըմբռնածին համաձայն դատելու մեր անցյալ ազգային կյանքը երածշտության տեսակետեն, թող հաճի առ Կոմիտաս վարդապետ փաստացիորեն լուցնելու մեզ: Ես պատմությունով կղբաղիմ, բայց մեծանուն բարեկամս միայն տրամաբանության հետեւ՝ հայտարերելով միենույն ատեն, որ ոնդհանուրին մեջն զատորշել, զտել ու քրեան բերել հայ երածշտությունը և անոր պատմությունը, շատ դժվար է և քանի մը կյանքեր մեկ-մեկու վրա պետք է՝ զանի ըլուի հանելու համար:

Հողվածագիր քահանան, մեջ բերելով Կոմիտասը, կամեր շնորհել բարեհաճ մակդիով մեծանուն վարդապետին այն խոսքը, ոի ոռուսը զարգացել է օտար քաղաքակրթությամբ, նույնիսկ իր դասերը հունականի վրա են կաղապարված, սակայն և այնպես ունի և ինքնուրույն լեզու, և ինքնատիպ եռածշտություն», կգրեր.

«Անշուշտ կրնունիմ, որ այնպես եղած է ու կրլա բոլոր ազգերուն համար, չունեցողը ունեցողեն փոխ առնելով: Բայց տիրապետող և տիրապետվող ազգերուն վիճակը ինքնուրույն չի կրնար մնալ հավասարապես: Օրինակ՝ ոռուս շատ բան հույնեն առած կրնա ըլլալ, բայց իբրև տիրապետող ազգ, ոչ մեջ որոշ ուղղություն, նկարագիր և ինքնուրույն տիպ մը կհորինե իրեն համար և հորինած է, այլ նաև իբրև

տիրող ուժ կազդե և աղդած է իր հպատակ ունեցած ազգի ու ցեղի կյանքին վրա: Ասիկա շատ բնական է արդեն: Երբ խոսքերնիւ նույնի վրա է, հաստատապես կրնամ ըսիլ, թե հայ ժողովուրդը, իբրև հպատակ, բացարձա կապես ազգված է տիրող ազգին բարբերեն, սովորություններն, մեկ խոսքով՝ անոր տիրող քաղաքակրթական կյանքեն, որուն մաս կկազմեն նաև ցեղի մը լեզուն և երածշտությունը: Երբեք չեմ ընդուներ այն թյուր վարկածը, թե նույնի մեջ հայերը սլավ երածշտության և հաստատապես կյանքը չեմ ընդունել, նույն բանը կրսեմ նաև տաճկահայերությունը հայերը սլավական է այդ: Նույն բանը կրսեմ նաև տաճկահայերությունը համար իր բոլոր կողմերովը»:

Պուրմայան առիթ բռնելով Կոմիտաս վարդապետի այն հավասարիքը, թե «յուրաքանչյուր ազգի երածշտությունն իր ազգի հնչական ելմէշներեն կծնի ու կծավալի» և թե «Հայ լեզուն ունի իր հատուկ հնչավորությունը, ուրեմն և համապատասխանող երածշտությունը», կպատմեր իր կարգին.

«Շատ ճիշտ է: Ս. Սահակի և ս. Մեսրոպի գրի գյուտով, ազգային գրականությունը և ազգային եկեղեցին ու երածշտությունը իրենց որոշ և հայերի նկարագիրը կազմեին, չէ: Եթե ազգի մը երածշտությունը իր ազգին լեզվին, գրին հնչական ելմէշներեն կծնին ու կծավալին, երբեք հայ ազգը հավաքական և միօրինակ հնարավորությունը չէ ունեցած իր ազգին, լեզվին, գրին հնչականությունով: Ինչպես երբեմն պարսկական և հունական բաժիններու հայերը բարբով, սովորությունով և լեզվով կտարբերեին, ճիշտ նույն համեմատությունով, նույնի և թուրքի բաժիններու պատկանող այժմու հայերն ալ կտարբերին և նույն պայմաններով լեզվի ու գրի հնչավորության տեսակետեն: Ասիկա, անշուշտ, մեր տրված ու տարանշատ վիճակին հետևանքն է: Այսօր հայ ցեղին միենույն անդամները՝ ոռուսարնակ, պարսկարնակ, ու թրքարնակ, միենույն հայ բառը տարբեր կհնչեն: Նույնիսկ միենույն երկրին՝ տարբեր, բայց ոչ հեռու բաղաբներուն ու գյուղերուն մեջ, տարբեր հնչականություններ կան: Այսօր ոռուսահայ և թրքահայ բարբառներուն շուրջը որոշ ուղղություն մը և վերջնական վճիռ մը չի կրնար տրվել, թե ո՞րն է շիտակը և ընդունելին: Երբ լեզվական խնդրին շուրջ համազգային և համայնական որոշում մը կամ վճիռ մը չէ տրված ըսելով, որ «լեզվին սա կերպն է, որ պիտի խոսվի և պիտի կոչվի համազգային լեզու», միենույն բանը նաև երածշտության համար է: Հայտնի է, թե նույնի և թուրքի իր հայերը համար և կեղեղեցիներուն մեջ միենույն տաղն ու շարականը 16 դարերի ի

վեր տարբեր կերպին: Ո՞վ պիտի կրնա վճռել, սակայն, թե մեկը կամ մյուսը անոնց- մեն, ուղիղն է կամ սխալը՝ հայերեն կամ ոչ հայերեն: Ո՞վ պիտի կրնա վճռել ադիկա»:

Պուրմայան քահանա կճգներ հատո ապա- ցուցանել:

«Լեզվի մը և երաժշտության մը նախնական կազմության մեջ ընդունելի է, որ փոխառու- թյուններ կը լլան տիրող տարրերու ազգեցու- թյան տակ, և զանոնք ազգային ուղղության և նկարագրի տակ ձևակերտելու և բնատու- միկ շունչով շնչավորելու և ոգերոբելու հար- կին տակ կդրվին: Նույն ատեն կարելի է ըսել, որ ցեղին խաղաղ ու ամփոփ վիճակին մեջ, նույն ցեղին ոգիին ու ազգային նկա- րագրին հետ նույնանուն, բայց հալածանքի, ցրվածության և օտար տիրապետության բուն ազգեցության տակ անխուսափելիու- րեն կայլասերեն հպատակ ցեղի մը լեզուն, երաժշտությունը և անոր հարաբերական կյանքը (վկա Համիդի շրջանը, ուր ազգային երգերը մոռցվեցան պահ մը, և բարքերը թուցան, վատթարացան): Կըսվի ընդհան- րապես, որ հայը իր դարավոր եկեղեցին ու ազգությունը պահած է, և իրավ որ այնքան տատանելե ու ծփալե ետք հալածանքի և արյունի ծովերու մեջ, մեծագույն բանն է՝ պահել իր գոյությունը, պահելով իր լեզուն ու գրականությունը, և հայրենի ավանդու- թյունները՝ ինչպես նաև՝ երաժշտությունն ու ճարտարապետությունն անցյալին: Ես, իրեն իմ նյութը, որուն վրա կիսուիմ, ըսել կուզեմ երաժշտության մասնավորապես, իմ կար- ծիքս ըլլալով կըսեմ, թե համեմատապես միայն պահած է ան իր գոյությունը այնքան, որքան կարելի եղած է պահիլ, միշտ նկատի ունենալով, սակայն, որ ցեղային առանձնա- հատուկ դրոշմը, բնականաբար, կկրեն ունէ լեզու և երգ՝ նույն այդ ցեղին բնատոհմիկ շունչով օծված հարազատությանը մեջ, ի- րենց տարանջատ ու ցրված, բաժան-բաժան միջոցին իսկ: Տ. Կոմիտաս վարդապետի ժո- ղովրդական գեղջովկ երգերն իրենց օտարա- սուլը կազմության մեջ հայացված ու հայուն հառաջանքներովն օծուն և անոր բերանով երգված և մեծանուն արվեստագետին ձեռքով դաշնավորված, պետք է հիացումով մտիկ ընել, հայուն մեջ՝ հայուն պես ապրելով: Ետք մեծ ծառայություն է, զոր կմատուցա- նե մեղի Տ. Կոմիտաս վարդապետ իր այդ հավաքած իրը 3000 կտոր երգերով: Ձշմա- րիտ հայու մը գործն է կատարածը: Երբ այժմու հայ երաժշտություն ըսվածը խառ- նակ է ըսելով, կընդունինք նույն ատեն, թե ունի իր մեջ կենսական կորիզը հայերի, կնշանակե, թե հայու զգացոմով երգված ունէ երգ և հայու հոգիով ունկնդրված ունէ

նղանակ, կարելի է հայացնել թե իսկ օտար շեշտ ու շունչ ունենա ան: Ահա այդ վիճակին մեջ կընդունիմ տ. Կոմիտաս վարդապետի հայ ժողովրդական երգերը՝ իբրև հայունը: Մնաց, որ մեր վիճաբանությունը արվեստի վերաբերող բնույթին վրա է լոկ, ոչ օտար կամ տոմմիկ բանահյուսության կամ եղա- նակի մը արտաբերած զգացումի արտահայ- տության վրա:

«Հայ եկեղեցական շարակնոցի մասին Տ. Կոմիտաս վարդապետի մասնագիտական ուսումնասիրությունը իր կենդանության օ- րով եթե կարենա գլուխ հանել ինքը, ամենա- մեծ լուծումը տված պիտի ըլլա հայ ինք- նուրույն երաժշտության՝ մինչև Բարսեղ ձո- նի շրջանը գոյություն ունեցող երաժշտու- թյան: Հին հայ խաղերու նշանակության թա- փանցելով՝ շանալ մեր նախնի եղանակները ձեռագրերու մեջն հանել ու արդի պահանջ- ներուն հարմարցնելով, եկեղեցական երա- ժշտությունը ոտքի կեցնել, գերազանցապես հակայական գործ է. շատ իրավունքով կըսե մեծանուն գիտնականը, թե «Անյսիսի աշ- խատանքներն անթերի և խղմմտորեն կա- տարելու համար մեկ մարդու կյանքը հերիք չէ»: Կերեկի, թե տ. Կոմիտաս վարդապետ Պոլսու մեջ իր հաստատելիք երաժշտանոցով, կիորհի նույն ատեն իրեն գործակիցները հասցնել, իր հայ ժողովրդական երգերուն ներշնչած հայեցի զգացումներով ժողո- վրդին ճաշակը մշակելու և աղնվացնելու տենչանքին հետ: Ավելորդ է, ուրեմն, տ. Կո- միտասեն պահանջել, թե պետք էր առաջ ե- կեղեցական երաժշտությունով զբաղեր և այլն: Նախ անիկա մեր սրտեն կիսուի, ետքը՝ հոգինեն: Ըսել շննք ուզեր, անշուշտ, թե եկե- ղեցական երաժշտությունով զբաղելու չէր, ընդհակառակը. բայց երբ անոր մասին տար- բեր մտքի կծառայե, չէ կարելի զինքը բռնա- դատել, որ տարիներով կազմած իր արվես- տին ծրագիրը զոհե, ինչ կրնանք ընել՝ ոշինչ»:

Ավելի քան հեգնությամբ գրի առնված այս տողերուն մեր երաժշտագետ քահանան հետևյալ եղանակությունը կլցեր:

«Տ. Կոմիտաս վարդապետ ինչո՞ւ եկեղե- ցական երաժշտությունով զըբաղիր նախ, քան իր հայ խաղերը իրենց նշանակությու- նով գտնելը: Անոր համար, անշուշտ, որ շպիտի կրնա իր փաստերը հաստատուն գե- տինի մը վրա կազմել, որովհետև հայ գեղ- ջուկ երգերեն շատ ավելի խառնիճաղանջ և բարդ վիճակի մեջ կտննվի ան: Եվ իորհին, որ հայ երաժշտությունը գտնելու և մաքրա- գործելու և հարազատ հողի վրա զնելու հա- մար եղած և ըլլալիք շանքերն ու աշխատու- թյունները որքան զուր և ծիծաղելի եղած

և կ պիտի ըլլան։ Այդ մասին կատարելավաս համաձայն եմ մեծանուն վարդապետին, այստարարելով, որ Հայ եկեղեցվոր շարակնուր Հայերի ոճին վերածելու համար անոր աշղատնիք-բանալին խազերն են, առանց առնց ճշտորոշ նշանակության կարելի չպիտի ուղարան մը ընկել անոնց մասին, ոչ ալ տակերու, երգերու և մեղեղիներու մասին, որոնք հմանապես անլուծելի կմնան այս կերպով։  
«... Վերջին խոսք. Հայուն երաժշտությունը զատ չէ, այլ խառնակ, բայց հայացված վաղուկ երգերը Հայ ժողովուրդին են, որոնց վրա կհիմնանք իրեն Հայուն երգը, Հայ ժողովորդին կողմէն երգված»<sup>14</sup>։

Եթե այսքան լայն տեղ տվինք Պուրմայան ջանապահի կարծիքներուն, անոր համար էր, որ անոնք կերպով մը արտահայտությունն ին Հայ եկեղեցվոր ծոցին մեջ բույն գրած թանձաղամիտներու ամբողջ զասի մը տեսակետներուն, զորս եթե անոնք կփորձեին առարածել փափսուրներով, Պուրմայան քանակ հանդգնությունը կունենար պարզել ջրապարակով։

Կոմիտաս պատասխանի արժանի շնորհեց Պուրմայան քահանայի այս նոր ելույթը։ Իր առաջին հրապարակային լուսաբանությանց մեջ ան ըստեր էր արդեն ամեն բան ու կարիք ուներ այլևս ողորմելի մարդոց հափուռքներովն դրադելու նվ հետո այդ պահուն ան վայլական էր այնպիսի տենդագին աշխատանքներով, որոնցմենք վայրկյան կորդելը շանցանք կսեպեր։ Մեկ կողմէն երգչախումբի մը ամբողջ բերք կար ուսին, ինչպես և իր պարապմունքները իր սաներուն հետ, և մյուս դողմեն՝ ան սկսած էր դասախոսությունները, որոնցմով շատ շանցած պիտի երթար բովանդակ աշխարհին ապացուցանելու անզամ մը ևս, և այս անզամ վճռական կերպով, Հայ շրաժշտության ինքնուրույնությունը, ի հետուին Հայ տիրացուներու ծիծաղելի քրթմընշուններուն։

Նվազ վրդովեցուցիլ չէր ելույթը ուրիշ տիպուսի մը՝ երմոդ Գույումշյանի, որ Սկյութարի ս. Կարապետ եկեղեցվոր երաժշտականատուն էր և զոր Ռեթմեռու Փափազյան երաժշտագետին աշակերտներուն մեջ «Հիշատակության արժանիք»-ներեն մին կհռչակելի, ավա՞ղ, «Հայ ձայնագրության պատմության» հեղինակը<sup>15</sup>։ Այս ողորմելի տիրացուն կհանդգներ նույնիսկ հրապարակով կասկածի տակ ձգելու Կոմիտաս վարդապետի շարականական հմտությունը։

<sup>14</sup> Սերվեր Բան. Պուրմայան՝ «Հայուն երաժշտությունը զուտ չէ, այլ խառնակ», «Տաճար», 1913 հոկտ. 20:

<sup>15</sup> Արխանակիս Բան. Հիսուրլյան՝ «Պատմություն Հայ ձայնագրության», 1914, էջ 165։

Այս համարձակությունը այնքան ընդպղեցուցիլ էր, որ գայթակղեցուց նույնիսկ Կոմիտասի գործի վրա այլապես ստվեր ձգելու ձգտող այն հաջանան, որ Սերվեր քահ։ Պուրմայանն էր: «Հայուն երաժշտությունը զուտ չէ, այլ խառնակ» խորագրով իր համբավավոր հոգվածին մեջ այս վերջինը կգրեր։

«Ես անձնականությունով շիմ սիրեր զբաղիլ, բայց պարտք կզգամ հիշեցնել մեկու մը՝ հոգվածագիր պ. Գույումշյանի, որ համարձակած էր, կարծեմ, ըսելու շափ, թե Տ. Կոմիտաս վարդապետ շարականական հմտություն չունի: Այսքան խեղճովկ ու ողորմելի գաղափար մը հայտնել մարդու մը դիմ, որ ծանոթ է Հայ մատենագրության, բանահյուսության, հանգերու և հորինվածքներու: Գոնե մեղմեն շատ ավելի զիտե, թե ո՞ր շարականը ո՞ր գարուն մեջ գրվեցավ և երգվեցավ, և ո՞վ էր երգողը և ո՞ւր և ի՞նչ տպավորության տակ երգեց: Վստահ կրնանք ըլլաւը որ զիտե այս ամենը: Հետո պ. Գույումշյանը թող զիտնա, որ Կոմիտաս վարդապետ կարող է մեր երգածին թրքահայոց պես կոկորդային թրթուացումներով երգել մեղեղի մը, սրբասացություն մը կամ ունէ տաղ կամ շարական: Դիտե թրքական եղանակներուն վիճակն ու հանդամանքը, ծանոթ է թուրքարաբարսիկ եղանակներուն. զիտե Ջյուսիյնի, էվիթ, Կերտանիե, Ջյուկյահ, Չարկյահ և այլ երաժշտական ձայներու, եղանակներու անուններն ու բառական նշանակությունները: Անոր մոտ, իրավ որ, կպակսինի քանի մը բաներ միայն, ինչ որ շտաբը ունինք: Ահա թե ինչ են՝ մեծախոսիկուրյուն, ցուցամօրթյուն, նպատառություն՝ ալլովք հանգերձ: Խսկապիս, խորահմուտ, զարդացած և բարի անձնավորություն մըն է Կոմիտաս վարդապետ՝ իր երաժշտական անհամեմատելի կարողության հետ: Զի մոռնանք ըսելու, որ տիպար եկեղեցական մըն է նույն ատեն: Բոլորովին տարրեր խնդիր մըն է զիտուն վարդապետին հետ զաղափարի անհամաձայնություննիս»<sup>16</sup>:

Կոմիտաս ալ չպատասխանեց: Նվիրական ուրիշ շատ պարտականություններ ուներ հոգվածես խուցած մարդոց հետ վեճ շարունակել առաջ:

Բոլոր կոնծած ուղեղներուն համար բավարույն պատասխանը պիտի հանդիսանալին իր ելույթները տարի մը հետո՝ երաժշտական աշխարհին առչե, երբ Կոմիտաս դափնի պիտի բերեր Հայ գեղջուկ երգին:

Պատասխանը օր մը պիտի տար պատմությունը ինքը:

<sup>16</sup> «Տաճար», 1913 Հոկտ. 20: